

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Հարկ վճարողի օրվա առթիվ

19.04.2023թ

Հարգելի հայրենակիցներ 1992 թվականի ապրիլի 19-ին առաջին անգամ ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում հարկերի մասին» ՀՀ օրենքը, որով մեր երկրում ձևավորվել են հարկային համակարգը, դրա սկզբունքները, հարկային պետական մարմին - հարկ վճարող հարաբերությունները:

Իսկ 2021 թվականին որոշում է ընդունվել՝ ապրիլի 19-ը որպես Հարկ վճարողի օր սահմանելու մասին:

Դժվար է պատկերացնել պետության գործունեությունը առանց հարկային քաղաքականության հայեցակարգի ներդրման և իրականացման, առանց հարկատուների քաղաքացիական պարտքի հստակ ու անթերի գիտակցման և կատարման:

Հայաստանի Հանրապետությունում 1992 թվականից ի վեր զարգացել և կատարելագործվել է ինչպես հարկային օրենսդրությունը, այնպես էլ՝ հարկային համակարգը և հարկային մարմին-հարկատու փոխհարաբերությունները, որոնք և նպատակաուղղվել են մեր երկրի կենսագործունեության ապահովմանը և զարգացմանը, սոցիալ-տնտեսական, անվտանգային, այլ կարևոր ու առաջնահերթ խնդիրների լուծմանը:

Համոզված եմ, որ բոլորս հարկ վճարելը համարում ենք մեր սահմանադրական պարտքը, դրա մեջ տեսնում ընդգծված հոգատարություն և հայրենասիրություն՝ ի շահ Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման ու հզորացման, համայնքների և ընտանիքների բարօրության:

Ուզում եմ նաև շեշտել, որ վերջին տարիներին նկատելի առաջընթաց է գրանցվել հարկ վճարողների և հարկային մարմնի միջև կառուցողական երկխոսության հաստատման, հարկային կարգապահության բարձրացման և հարկ վճարելու մշակույթի արմատավորման ուղղություններում:

Եվ դժվար չէ ըմբռնել, որ մեր երկրի ապագան, նրա զարգացումն ու հզորացումը կախված են բոլոր հարկատուներից անխտիր:

Թույլ տվեք շնորհավորել բոլորիս Հարկ վճարողի օրվա առթիվ, մաղթել խաղաղ ու ստեղծագործ հայրենիք, աշխատանքային անսպառ եռանդ, նորանոր ձեռքբերումներ և հաջողություններ:

Լավագույն ցանկություններով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան